**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

# ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «10» հունվարի, 2019 թ.

## Հ Ր Ա Մ Ա Ն № 01-Ա/Ք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի ԹԻՎ 08-Ա/Ք ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի միջև կնքված համաձայնագրի շրջանակներում անցկացված «**ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀՀ - 2018**» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի իրականացման համար ՀՀ պետական բյուջեի «Միջազգային գիտական համագործակցություն» ծախսային ծրագրի ֆինանսական միջոցներից տրամադրվող գումարների օգտագործման մասին» 2018 թ. մարտի 21-ին կնքված ՀՌ18-36 պայմանագրի 2-րդ կետի «2.1.4» և «2.1.6» ենթակետերը, ինչպես նաև Հայ-ռուսական համալսարանի գիտական գծով պրոռեկտոր Պ. Ս. Ավետիսյանի 27.12.2018թ. թիվ 04/10 գրությունը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2018թ. մարտի 1-ի թիվ 08–Ա/Ք հրամանի հավելվածի 36. կետում որպես «18RF-004» ծածկագրով ծրագրի ղեկավար «Կարապետյան Գառնիկ Ալբերտի» փոխարեն նշել «Մարգարյան Վաչագան Նիկոլայի»:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ